ծարանը, բայց յետոյ, երբ շերամապահները ուսումնարանի աշակերտներից և պատահական այցելուներից իմացան, որ որդնաբուծարանի մուտքը ոչ միայն չէ արգելուած, այլ և բացատրութիւն են տալիս այն տեղ իւրաքանչիւր մարդի, որ հետաքրքրվում է այդ գործով՝ այցելուների թիւը սկսեց արագութեամբ աճիլ. շատերը գալիս էին նոյն իսկ բաւականին հեռաւոր գիւղերից, մանաւանդ մեծ էր լինում այցելուների թիւը տօնավաճառ օրերում։

Տեղական շերամապահների սկզբում ցոյց տուած կասկածաւոր վերաբերումը դէպի որդնաբուծարանի յառաջադիմութիւնը վերջում բաւականին փոխուեցաւ, թէ և հէնց այժմ էլ նոր եղանակի անհամեմատ արդիւնաւոր հետեւանքը տեսնողներից շատերը դարձեալ յաջողութիւնը չեն վերագրում նոր եղանակին, այլ որդնաբուծարանի բաղդին, և դեռ հարկաւոր է մի շարք տարիներ, որ տեղացի գիւղացին կատարելապէս հասկանայ, որ միայն բաղդը շատ քիչ է, այլ գործը կանոնաւոր առաջ տանելու համար հարկաւոր է և գիտութիւն։

Անհրաժեշտ է նոյնպէս հեշտացնել բոժոժի վաճառումը, հիմնելով մի քանի յանձնարարական տներ (կոմիսիոներութիւն), ոչ մեծ յանձնարարական վարձատրութեամբ, իսկ գլխաւորը ազատել շերամապահներին տեղացի գնողների խարդախութիւններից, որոնք ծանրաբեռնում են նրանց կամ սերմով, կամ ապառիկ տուած մանր գումարներով, պարտաւորեցնելով վճարել պարտքը բոժոժով, նշանակուած գնի համեմատ։ Շերամապահը, շատ անգամ առաջուց ստանալով այդ գնողից մի որոշեալ գումար, դառնում է նրա մշտական անվճար պարտապանը։ Որքան էլ նա չվճարէ իւրաքանչիւր տարի, տոկոսն այնքան է աճում, որ պարտքը ամբողջապէս մնում է յաջորդ տարուայ համար։ Եթէ շերամապահները արքունական գանձարանից անեն ամենաանշան դրամական փոխառութիւն, որ ապահովացրած կլինի իրանց թթենիների այգիներով, դրանով գործին տուած կլինին ահագին օգուտ, իսկ բնակիչները կարող կլինին կատարելապէս օգտուիլ իրանց թթենիներով, կրկնապատկելով և եռապատկելով իրանց պարապմունքը։

Բագուի նահանգի կլիմայական և հողային պայմանները նրպաստում են նշանաւոր կերպով ընդարձակել շերամապահութիւ-